

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



**ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ
ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ 2017

Հապավումներ

ԱԲՀ – Ավանդական բժշկության համալսարան

ՄԿԾ - Մասնագիտության կրթական ծրագիր

ՈԱԲ - Որակի ապահովման բաժին

ԵԶՈԼ - Եվրոպական չափորոշիչներ և ուղեցույցներ (ESG)

Բովանդակություն

ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	4
ՆԵՐՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ ՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐ	4
ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ ՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐ	4
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	5
ԱԲՀ-ՈՒՄ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ	5
ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ	7
Դասախոսների հետ հարցազրույցի ուղեցույց	7
ՈՒՍՈՒՄՆԱԾԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ԳՈՐԾԻՔ	8
Ուսումնաստժանդակ կազմի ներկայացուցիչների հետ հարցազրույցի ուղեցույց	8
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ.....	9
Ուսանողների հետ խմբային քննարկման ուղեցույց	9
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱԿԱՐԱՐԿԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՑ	13
ԱԲՀ ՇՐՋԱՆԱԿԱՐՏՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ	18
ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	21
ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ.....	23
Ուսանողի ԿՈՂՄԻՑ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ...	28
Ուսանողի ԿՈՂՄԻՑ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ...	30

ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փաստաթղթով սահմանվում է «Ավանդական բժշկության համալսարանի» որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության քաղաքականությունը և ներգրավվածության ապահովման մեխանիզմները:

Քաղաքականության դրույթների իրականացումը պարտադիր է համալսարանի բոլոր մակարդակների ղեկավարների և որակի ապահովման գործընթացների պատասխանատուների համար:

Ներքին և արտաքին շահակիցներից հետադարձ կապի ստացման քաղաքականությունը **հիմնվում է** հետևյալ փաստաթղթերի վրա՝

- Մասնագիտության կրթական ծրագրի հավատարմագրման չափանիշներ
- ՀՀ-ում գործող ենթակառուցվածքային հավատարմագրման չափանիշներ
- Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղեցույցներ (ESG)
- ԱԲՀ կանոնադրություն
- ԱԲՀ Ռազմավարական ծրագիր:

Որպես «շահակից» ընդունվում է այն անձը (անձիք) կամ կառույցը, ով իր գործունեությամբ անմիջականորեն ազդում է Համալսարանի գործունեության վրա կամ կրում է Համալսարանի գործունեության ազդեցությունը:

Այդ տեսակետից առանձնացվում են համալսարանի հիմնական շահակիցների երկու խումբ՝

- **Ներքին շահակիցներ** (ուսանողները, պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնասօժանողական կազմը),
- **Արտաքին շահակիցներ** (շրջանավարտները, գործատուները, դիմորդները և նրանց ծնողները, ոլորտի պետական և մասնագիտական կառույցները և այլն):

ՆԵՐՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ ՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Պարբերականություն: Ներքին շահակիցներից ստացվող հետադարձ կապը պետք է ապահովել **յուրաքանչյուր տարին առնվազն մեկ** անգամ՝ անհատական հարցազրույցների, խմբային քննարկումների միջոցով: Ըստ անհրաժեշտության համալսարանը կարող է իրականացնել հավելյալ հարցումներ:

Գործիքներ՝

- Ուսումնասկաօժանողական կազմի ներկայացուցիչների հետ հարցազրույցի ուղեցույց:
- Դասախոսների հետ հարցազրույցի ուղեցույց:
- Դասախոսների հետ ստանդարտացված հարցազրույցի հարցաթերթ:
- Ուսանողների համար նախատեսված հարցաթերթիկներ:
- Ուսանողների հետ խմբային քննարկման ուղեցույց:

ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ ՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Պարբերականություն: Արտաքին շահակիցներից ստացվող հետադարձ կապը ԱԲՀ-ն ստանում է հետագայում այլ հաստատություններում ուսումը շարունակող ԱԲՀ-ի շրջանավարտների վերաբերյալ՝ ուսումնական մասի կողմից:

Գործիքներ

- Սոցցանցերով, Էլեկտրոնային նամակներով:

- Անհատական տեղեկատվության փոխանակում:
- Ավարտական փաստաթղթերի պատճեններ:
- Աշխատանքի վայրի վերաբերյալ տեղեկատվություն:
- Շրջանավարտների հետ ստանդարտացված հարցազրույցի հարցաթերթ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպես նշվեց, ԱԲՀ-ի ներքին և արտաքին շահակիցներից հետադարձ կապի ստացման մեխանիզմները հիմնականում հիմնված են հարցման մեթոդի վրա:

Հարցումներ կարելի է իրականացնել ինչպես տարբեր նպատակներով, այնպես էլ տարբեր մակարդակներում: Ուսանողների գոհունակության գնահատումը հաճախ կիրառվում է հետևյալ մակարդակներում՝

- Համալսարանական մակարդակ
- Ֆակուլտետի մակարդակ
- Մասնագիտության կրթական ծրագրի մակարդակ
- Դասընթացի/մոդուլի մակարդակ
- Առանձին դասախոսների գնահատում
- Ավարտելուց 5 տարի հետո (tracer studies)

ԱԲՀ-ՈՒՄ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

ԱԲՀ-ում հարցումները կազմակերպվում են սոցիոլոգիական հետազոտության պահանջներին համապատասխան:

Կախված նպատակի՝ հարցումներ կազմակերպող խումբը՝ ՈԱԲ-ը և ուսումնական մասը կիրառելու է թե՛ որակական, թե՛ քանակական մեթոդներ: Մինևույն հետազոտության ժամանակ ըստ անհրաժեշտության համակցվելու են տարբեր մեթոդներ՝ քանակական և որակական, ինչը հնարավորություն է տալիս երևույթի առավել բազմակողմանի, համապարփակ և խորը ուսումնասիրություն կատարել: Սակայն կան նպատակներ և խնդիրներ, որոնց ուսումնասիրման համար բավարար է կիրառել միայն դրանից մեկը:

Սոցիալական գիտություններում հիմնախնդիրների համապարփակ ուսումնասիրման նպատակով կիրառվում է **տրիանգուլացիայի տեխնիկան** (triangulation)՝ երկուսից ավելի հետազոտական մեթոդների կիրառությունն առավել հավաստի էմպիրիկ տվյալներ ստանալու համար, ինչը կիրառվելու է նաև ԱԲՀ-ի կողմից:

Այսինքն՝ միաժամանակ օգտագործվում են տեղեկության ստացման մի քանի մեթոդներ՝ խմբային քննարկումներ, ձևայնացված հարցազրույցներ, դիտարկումներ, փաստաթղթերի վերլուծություն և այլն:

ԱԲՀ-ում կիրառվում են հարցման հետևյալ **մեթոդները՝**

Քանակական մեթոդներ

- Առցանց հարցումներ՝ հարցումների անցկացման էլեկտրոնային համակարգի միջոցով
- Խմբային և անհատական անկետավորում
- Ձևայնացված հարցազրույց

Որակական մեթոդներ

- Խորին հարցազրույց
- Փորձագիտական հարցազրույց
- Խմբային քննարկում

Մեթոդների սահմանումից հետո **մշակվում են հարցաշարերը և հարցաթերթերը**, որոնք մինչ հարցման ողջ ծավալով իրականացումը անցնում են **փորձարկման փուլ**:

Հարցաթերթերի փորձարկումից և վերջնականացումից հետո իրականացվում են հարցումները:

ԱԲՀ-ի ներքին և արտաքին շահակիցներից հետադարձ կապի միջոցով ստացված տվյալները կիրառվում են հետևյալ նպատակներով՝

- Բուհի ինքնագնահատման գեկույցը մշակելիս,
- ՄԿԾ մոնիթորինգի և վերանայման ժամանակ,
- Բուհի գործունեության վերաբերյալ ներքին և արտաքին շահակից խմբերի հետ հաղորդակցման, տեղեկատվության ռազմավարություններ և մարտավարություններ մշակելիս,
- Դասախոսների գնահատման ժամանակ,
- Բուհի գործունեության տարբեր ոլորտների արդյունավետությունը գնահատելիս,
 - ընդունելության գործընթաց
 - գնահատման գործընթաց,
 - ավարտական քննությունների կազմակերպման,
 - մասնագիտական առաջընթացի հնարավորություններ,
 - նյութատեխնիկական հագեցվածության ապահովման մակարդակի և այլն:
- Բուհի ռազմավարական ծրագրի հստակեցնելիս, ինչպես նաև գնահատելիս
- Որոշումներ կայացնելիս
- Ուսանողների առաջադիմության վրա ազդող գործոնները վեր հանելիս,
- Բուհ-աշխատաշուկա կապը պահելու և զարգացնելու նպատակներով:

Հարցաշարերի վերանայում

Քանի որ հարցումները համալսարանի կողմից շարունակաբար կատարվող գործողությունն է, ապա յուրաքանչյուր հարցումից հետո ԱԲՀ կարող է վերանայվել հարցաշարերը և հարցաթերթը՝ դրանք բարելավվելու նպատակով: Սակայն պետք է հաշվի առնել, որ հարցաթերթերի փոփոխության դեպքում հնարավոր չի լինի համադրել տարբեր ժամանակներում կատարված հարցումների տվյալները: Հետևաբար փոփոխությունները պետք է կատարել խիստ անհրաժեշտության դեպքում:

Հետադարձ կապի ստացումը ԱԲՀ-ի համար պարբերաբար իրականացվող, շարունակական գործընթաց է, որի համար պատասխանատու է ԱԲՀ-ի Ուսումնական մասը, ի դեմս ղեկավարի: Հետադարձ կապի ստացումը գործողությունների ամբողջությունն է, որոնք ուղղված են ԱԲՀ ներքին և արտաքին շահակիցներից քննարկումների, հարցումների և այլ տիպի հանդիպումների միջոցով տեղեկատվության ստացմանը, վերլուծությանը և կիրառմանը:

Ներքոնշյալ աղյուսակը ներկայացնում է ԱԲՀ-ի կողմից ներքին և արտաքին շահակիցներից հետադարձ կապի ստացման մեխանիզմները, որոնք ներդրման փուլում են:

Աղյուսակ 1. ԱԲՀ-ում ներդրվող հետադարձ կապի ստացման մեխանիզմները

Հետադարձ կապի մեխանիզմներ		
	Շահակից	Մեխանիզմ
Արտաքին շահակիցներ	Շրջանավարտ, գործատուներ	<ul style="list-style-type: none"> ▪ Օրդինատուրայի ավարտին ստացվող կարծիք ուսանողների վերաբերյալ : ▪ Շրջանավարտների վերաբերյալ գնահատական գործատուների կողմից:
	Ոլորտի պետական և մասնագիտական կառույցներ	<ul style="list-style-type: none"> ▪ Հարցումներ շրջանավարտների շրջանում ▪ Ուսման ավարտին հարցում մասնագիտական այլ կառույցներում ավարտական կուրսերի ուսանողների շրջանում (օրդինատուրա և այլ):
Ներքին	Դասախոս	<ul style="list-style-type: none"> ▪ Դասախոսների շրջանում անցկացվող հարցում: ▪ Դասախոսի ինքնագնահատում:

շահակիցներ		<ul style="list-style-type: none"> Ամբիոնի նիստեր:
	Ուսանող	<ul style="list-style-type: none"> Ուսանողների շրջանում անցկացվող հարցում: Ուսանողի կողմից առարկայի դասավանդման գնահատում:
	Ուսումնասովանողական կազմ	<ul style="list-style-type: none"> Ուսումնասովանողական կազմի ներկայացուցիչների շրջանում անցկացվող հարցում: Ամբիոնի նիստեր:

Ներքին և արտաքին շահակիցներից ստացված հետադարձ կապը օգտագործվում է՝

- ՄԿԾ-ների մշտադիտարկման և վերանայման ժամանակ:
- Դասախոսների գնահատման ժամանակ:
- ԱԲՀ կողմից տեղեկատվության ապահովման որակի գնահատման ժամանակ:
- Ուսանողական աջակցության փաթեթը մշակելիս՝ ուսանողների կարիքների գնահատման ժամանակ:

ԴԱՍԱՆՈՍՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱԴԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Դասախոսների հետ հարցազրույցի ուղեցույց

- Որքա՞ն ժամանակ եք աշխատում ԱԲՀ-ում, ի՞նչ առարկաներ եք դասավանդում, ի՞նչ կրթություն ունեք, ի՞նչ մասնագիտություն:
- Ինչպե՞ս եք ընդունվել ԱԲՀ աշխատելու, հստակ էր բուհում դասախոսին ներկայացվող պահանջները, կներկայացնեք այդ պահանջները:
- Որտե՞ղ է սահմանված ձեր աշխատանքային պարտականությունները: Ինչպե՞ս եք տեղեկացել:
- Բուհի որ ստորաբաժանման հետ եք հիմնականում աշխատում: Ինչպես եք կողմնորոշվում որ հարցով բուհի որ ստորաբաժանմանը դիմեք, ինչպես են դասախոսները կողմնորոշվում, թե որ խնդրի, հարցի դեպքում ԱԲՀ որ ստորաբաժանմանը պետք է դիմել:
- Ո՞ր ժամերին եք ընդունում ուսանողներին, որ օրերին, նրանք տեղեկացված են դրա մասին: Ինչ նպատակով եք հիմնականում դասավանդումից դուրս հանդիպում ուսանողների հետ: Ինչպես և ինչ պարբերականությամբ է կազմակերպում ուսանողների հետ խորհրդատվական հանդիպումները: Ինչպես եք տեղեկացնում ուսանողներին դրանց մասին:
- Ամբիոնում փաստաթղթաշրջանառությունն ինչպե՞ս է արվում, որքանով է հավաքված տեղեկությունները թարմացվում, ինչ հաճախականությամբ:
- Դուք Ձեր աշխատանքային փաստաթղթերը հստակ դասակարգե՞լ եք, թե եթե մեկ այլ մարդ աշխատի Ձեր փոխարեն կկարողանա անհրաժեշտ տեղեկատվությունը գտնել, թե միայն Դուք գիտեք դրանց դասավորվածության մասին:
- Ինչպես եք մշակում առարկայական ծրագրերը, ում հետ եք աշխատում մշակման ընթացքում, ինչպես եք վերանայում, ինչ հաճախականությամբ, ինչն եք հաշվի առնում փոփոխություններ կատարելիս:
- Դասախոսների գնահատման ինչպիսի՞ մեխանիզմներ են կիրառվում բուհում:
- Վերապատրաստման դասընթացների մասնակցում ե՞ք, ինչպիսի վերապատրաստումների կարիք ունեք, ինչպես և որքանով է բուհը նպաստում դրանց Ձեր մասնակցությանը:
- Դասախոսների խրախուսման ինչպիսի՞ մեխանիզմներ կան:
- Ինչպիսի՞ գիտահետազոտական աշխատանքներ են իրականացվում բուհում, Ձեր ամբիոնում: Որքանով եք ներգրավված այդ աշխատանքներին: Վերջին անգամ ինչ

հողված եք գրել, ինչ գիտաժողովի եք մասնակցել: Որտեղ, ինչպես եք տեղեկացել այդ հնարավորության մասին:

- Գրագողությունը ուսանողների և դասախոսների մոտ որքանով է տարածված:
- Դասը պլանավորում եք, որքանով եք հետևում այդ պլանին, ինչպես եք նոր թեման մատուցում ուսանողներին, ինչպես եք ամրապնդում հին թեման: Ուսանողների գնահատման ինչպիսի՞ մեթոդներ եք կիրառում:
- Ինչպես եք գնահատում դասավանդման մեթոդների արդյունավետությունը:
- Ինչպես և որքանով եք նպաստում ուսանողակենտրոն ուսուցմանը: Կողմ եք այդ մոտեցմանը և ինչու: Եթե կողմ չեք, ինչու:
- Ուսանողների կողմից ինչպես է գնահատվում դասընթացի արդյունավետությունը և ակնկալվող արդյունքների ձեռքբերումը:

ՈՒՍՈՒՄՆԱԾԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ԳՈՐԾԻՔ

Ուսումնասովանդակ կազմի ներկայացուցիչների հետ հարցազրույցի ուղեցույց

- Որքա՞ն ժամանակ եք աշխատում ԱԲՀ-ում, ինչ պաշտոն եք զբաղեցնում, ո՞րն է Ձեր հիմնական պարտականությունները, ի՞նչ կրթություն ունեք, ի՞նչ մասնագիտություն:
- Որտե՞ղ են սահմանված Ձեր աշխատանքային պարտականությունները: Ինչպե՞ս եք տեղեկացել: Ինչպիսի փոխհարաբերություններ ունեք այլ ստորաբաժանումների հետ, որ ստորաբաժանումների հետ եք հիմնականում աշխատում: Ո՞ր փաստաթղթում է դա ամրագրված: Ինչպե՞ս եք կողմնորոշվում որ հարցով ում դիմեք, ինչպե՞ս են դասախոսները և ուսանողները կողմնորոշվում որ հարցով ում դիմեն:
- Հիմնականում ի՞նչ հարցերով են ամբիոնին դիմում ուսանողները, որքան հաճախ են դիմում ամբիոնին ոչ ամբիոնին վերաբերող հարցերով, ինչով է դա պայմանավորված, ինչպես կարող են դասախոսներն իմանալ, թե ինչ հարցերով ձեզ կարող են դիմել:
- Ամբիոնում փաստաթղթաշրջանառությունն ինչպե՞ս է իրականացվում, որքանով է հավաքված տեղեկությունները թարմացվում, ինչ հաճախականությամբ:
- Դուք Ձեր աշխատանքային փաստաթղթերը հստակ դասակարգե՞լ եք, թե եթե մեկ այլ մարդ աշխատի Ձեր փոխարեն կկարողանա անհրաժեշտ տեղեկատվությունը գտնել, թե միայն Դուք գիտեք դրանց դասավորվածության մասին:
- Ինչպես և ինչ պարբերականությամբ և ում եք ներկայացնում հաշվետվությունն Ձեր ստորաբաժանման գործունեության մասին:
- Ինչպե՞ս են մշակվում առարկայական ծրագրերը ԱԲՀ-ում, ում հետ եք աշխատում մշակման ընթացքում, ինչպես եք վերանայում, ինչ հաճախականությամբ, ինչն եք հաշվի առնում փոփոխություններ կատարելիս: Ամբիոնը ինչպես է մասնակցում այդ գործընթացին: Առարկայական ծրագրերի մշակումն ու վերանայումն ինչպես է իրականացվում: Այդ գործընթացները կարգավորող ինչպիսի փաստաթղթեր կան:
- Դասախոսների գնահատումը ինչպես է իրականացվում, ինչ մեթոդներով, ինչ չափանիշներով, դասախոսների զարգացմանն ուղղված ինչպիսի դասընթացներ են կազմակերպվում բուհում, ինչպե՞ս եք վեր հանում դասախոսների կարիքները, ինչ դասընթացների կարիք կա, որտեղ են վերապատրաստվել, ինչպե՞ս է դրան նպաստել բուհը:
- Դասախոսների խրախուսման ինչպիսի՞ մեխանիզմներ կան:
- Ինչպիսի՞ գիտահետազոտական աշխատանքներ են իրականացվում բուհում, (*ամբիոնի վարիչին*) Ձեր ամբիոնում:
- Գրագողությունը ուսանողների և դասախոսների մոտ որքանով է տարածված: Ինչպե՞ս եք բացահայտում և կանխում նման դեպքերը:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Ուսանողների հետ խմբային քննարկման ուղեցույց

- Ինչու՞ եք ընտրել այդ մասնագիտությունը, ինչու այդ բուհը:
- Պատմեք ընդունելության մասին: Ինչ դժվարություններ կան, հստակ է ընդունելության ընթացակարգը:
- Ինչպե՞ս են ձեզ տեղեկացրել ԱԲՀ-ի կառուցվածքի մասին, ինչի համար ում պետք է դիմեք: Ինչի՞ց եք գոհ, ինչը պետք է փոխել:
- Առարկաները համապատասխանում են ձեր մասնագիտական պահանջներին, դասապրոցեսը ուսանողակենտրոն է, գնահատումը հստակ է, մինչև քննությունները տրվում են գնահատման չափանիշները:
- Որքանո՞վ ես գոհ պրակտիկայից, որքանո՞վ է պրակտիկան արդյունավետ:
- Ինքնուրույն աշխատանքները ինչպե՞ս եք մշակում, գրագողությունը տարածվա՞ծ է ուսանողների շրջանում, ինչո՞ւ են ուսանողները դիմում այդ քայլին:
- Գործո՞ւմ են խորհրդատվական ծառայություններ, ինչպիսի՞ նմանատիպ ծառայություններ կան, ինչպիսի՞ խորհրդատվությունների կարիք ունեն ուսանողները, ինչպե՞ս կցանկանայիք ստանալ խորհրդատվություն:
- Հստա՞կ է ձեզ համար որ հարցի համար երբ, ում կարող եք դիմել, ինչպես եք տեղեկացել:
- Կարիերային նպաստող ինչպիսի՞ ծառայությունների եք ծանոթ:
- Միջավայրը առողջ և անվտանգ է, ձեզ վստահ ու անվտանգ եք զգում համալսարանում:
- Ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմինը ո՞րն է, ինչքանո՞վ է ծանոթ ուսանողների խնդիրներին, որքանո՞վ է օբյեկտիվ և ճիշտ ներկայացնում ձեր շահերը:
- Բուհի ռազմավարական ծրագրին ծանոթ եք, ինչպե՞ս, ո՞րն է առաքելությունը, նպատակները:
- Ինչպե՞ս կարող են ուսանողները մասնակցել բուհում որոշումների կայացմանը, որքանո՞վ է այդ գործընթացը հնարավորություն տալիս ուսանողներին արտահայտելու իրենց կարիքները, պահանջները:
- Չեղչային համակարգը, նպաստները տրամադրվո՞ւմ են, ինչպե՞ս են գործում ուսանողների խրախուսման մեխանիզմները:
- Տեղեկատվությունը ո՞ւմից եք ստանում, որ հարցի մասին որտեղից պետք է ուսանողը տեղեկացվի, ինչպե՞ս է իրականում դա տեղի ունենում:
- Ինչպե՞ս է ձեզ հարմար տեղեկանալ բուհի մասին, որ ոլորտի մասին որտեղից:
- Ի՞նչ եք պատրաստվում անել բուհն ավարտելուց հետո (*ավարտական կուրսի ուսանողներին*)
- Որքանո՞վ եք վստահ, որ կընդունվեք օրդինատուրա:
- Ի՞նչ առաջարկություններ ունեն բուհի որակը բարելավելու ուղղությամբ:
- Առհասարակ ինչպե՞ս կարող են համալսարանի ուսանողները արտահայտել իրենց կարծիքը, առաջարկությունները և դժգոհությունները բուհի մասին, ինչ աղբյուրներով:
- Դասախոսական կազմի մասնագիտական կարողությունները ինչպե՞ս կգնահատեք: Որքանով են ձեզ դասավանդում ոլորտի առաջատար մասնագետները, որքանով ոչ: Ինչպե՞ս է առհասարակ գնահատվում դասախոսների մասնագիտական պատրաստվածությունը ուսանողների կողմից:
- Որքանո՞վ եք ներգրավված բուհի գիտահետազոտական աշխատանքներին, երբևէ մասնակցել եք նման ծրագրի:

- Դասախոսները իրենց գիտական աշխատանքների վերաբերյալ կիսվում են ձեզ հետ, դրանց բովանդակությունը ներկայացվում է ձեզ դասերի ընթացքում:
- Ի՞նչ եք ակնկալում բուհից այս փուլում:
- Եթե նորից ընտրության հնարավորություն ունենայիք, ո՞ր մասնագիտությունը կընտրեիք, ո՞ր բուհը, ինչու՞:

Այլ բուհերից ԱԲՀ տեղափոխված ուսանողներին տրվող հարցեր

- Ինչու՞ տեղափոխվեցիք ԱԲՀ, որտեղի՞ց եք առաջին անգամ լսել ԱԲՀ-ի մասին, ո՞րն է առավելությունը, որը թերություն՝ ձեր առաջին բուհի հետ համեմատած:
- Տեղափոխման ընթացակարգը հստակ էր, հարմար էր ձեզ այն:
- Ինչու՞ փոխեցիք ձեր մասնագիտությունը, ինչու՞ հենց այս մասնագիտությունը:

Շրջանավարտի հետ հարցազրույցի հարցաշար

Կրթական համակարգի վերաբերյալ հարցեր

- Ի՞նչ եք կարծում, ԱԲՀ-ն ի՞նչպիսի գիտելիք ու հմտություններ է տալիս:
- Ի՞նչ քայլեր են պետք ձեռնարկել, որ բուհի շրջանավարտը աշխատաշուկային համապատասխան գիտելիքներ և հմտություններ ունեցող մասնագետ լինի բուհն ավարտելիս:
- Ձեզ մոտ սովորելու համար ի՞նչ գիտելիքներ և հմտություններ են անհրաժեշտ, որ չի կարողանում ապահովել ԱԲՀ-ն: Ինչպիսի՞ մասնագիտությունների պահանջարկ այսօր ունի աշխատաշուկան:

ԱԲՀ-ի հետ համագործակցության վերաբերյալ հարցեր

- Ինչպիսի՞ն է ԱԲՀ-ի հետ Ձեր համագործակցության բնույթը:
- Ձեր աշխատակիցների շարքում կա՞ն ԱԲՀ շրջանավարտներ: Եթե այո, ապա որքանո՞վ են նրանք որպես մասնագետ համապատասխանում Ձեր պահանջներին:
- Երբևէ դիմե՞լ եք ԱԲՀ-ի ղեկավարությանը մասնագետ տրամադրելու պահանջով:
- Որո՞նք են ԱԲՀ-ի հետ Ձեր՝ համագործակցության ընդլայնման ուղիները:

Հետադարձ կապի ստացման մեխանիզմների վերանայման գործիք

Արդյո՞ք ԱԲՀ-ն հավաքագրում է որակական և քանակական տեղեկատվություն:

Ինչպե՞ս են մշակվել հարցման գործիքները, ինչպե՞ս է մասնակցել այդ գործընթացին ՈԱԲ-ը:

Ո՞րն է հետադարձ կապի ստացման հիմնական նպատակը և խնդիրները: Որո՞նք են հիմնական ոլորտները, որոնց մասին ստացվում է հետադարձ կապ:

Որքա՞ն հաճախ է ստացվում հետադարձ կապը: Նկարագրել ըստ յուրաքանչյուր շահակցի: Բոլոր շահակիցները մասնակցում են հետադարձ կապի գործընթացներին:

Ի՞նչ մակարդակում է հավաքագրվում հետադարձ կապ՝ դասընթաց, ՄԿԾ, համալսարան:

Ինչպիսի՞ հարցադրումներ են հիմնականում կիրառվում հարցման ժամանակ՝ փակ հարցեր, բաց հարցեր, ինչո՞ւ:

Ո՞վ է պատասխանատու հետադարձ կապի ստացման գործընթացների համար: Ինչպե՞ս և ո՞ւմ կողմից է վերլուծվում տեղեկատվությունը: Ինչպե՞ս են մյուս ստորաբաժանումները մասնակցում/օժանդակում այդ գործընթացին:

Ինչպե՞ս և որտե՞ղ են պահպանվում լրացված հարցաթերթերը, ձայնագրությունները, վերլուծված տեղեկատվությունը: Ո՞ւմ է հասանելի դրանցից յուրաքանչյուրը: Հրապարակային են արդյո՞ք վերլուծությունները:

Ինչպե՞ս է կիրառվում յուրաքանչյուր շահակից խմբից հետադարձ կապի միջոցով ստացված տեղեկատվությունը

- Ուսանողներ
- Դասախոսներ
- Ուսումնաօժանդակ կազմ
- Շրջանավարտներ
- Գործատուներ

Ի՞նչ ձեռքբերում կնշեք տեղեկատվության կիրառման տեսանկյունից: Յուրաքանչյուր շահակից խմբի հետ ինչպե՞ս եք կիսում հետադարձ կապի միջոցով ստացված տեղեկատվությունը:

Ինչպե՞ս և ո՞վ է որոշում, թե ի՞նչ գործողություններ է պետք ձեռնարկել այդ արդյունքների հիման վրա: Ո՞վ է մասնակցում այդ գործընթացին:

Մշակվո՞ւմ է գործողությունների ծրագիր դրանց հիման վրա:

Պլանավորված գործողությունները ո՞ւմ հետեն է քննարկվում: Ինչպե՞ս է լուսաբանվում գործողությունների ընթացքը:

Ո՞վ է հետևում գործողությունները իրականացվել են թե, ոչ, որքանո՞վ են արդյունավետ եղել:

Որքա՞ն ժամանակ է տևում արդյունքների հիման վրա գործողությունների ծրագրի մշակումը և իրականացումը:

Ինչպիսի՞ ազդեցություն ունի յուրաքանչյուր շահակից խմբից ստացված տեղեկատվությունը՝

- Ուսանողներ
- Դասախոսներ
- Ուսումնաօժանդակ կազմ
- Շրջանավարտներ
- Գործատուներ

Որքանո՞վ են նրանց տրամադրած արձագանքը օգտակար որակի ապահովման համար:

Յետադարձ կապի ստացման ո՞ր մեխանիզմն է ամենաարդյունավետը և ինչո՞ւ:

Ո՞ր շահակից խմբերն են առավել ակտիվ և պասիվ մասնակցում հետադարձ կապի գործընթացներին: Ի՞նչ քայլեր եք ձեռնարկում նրանց մասնակցությունը ակտիվացնելու համար:

Ի՞նչ հիմնական փոփոխություններ են տեղի ունեցել մինչ այժմ, որոնք հիմնված են հետադարձ կապի վրա:

Ինչպիսի՞ խնդիրների և դժվարությունների եք հանդիպել հետադարձ կապի գործընթացների կազմակերպման ընթացքում: Ինչպե՞ս եք հաղթահարել դրանք:

Որքանո՞վ է ԱԲՀ-ի ղեկավարությունը հետաքրքրված հետադարձ կապի գործընթացներով և ինչու: Որքա՞ն մարդկային, ֆինանսական ռեսուրս է ծախսվում յուրաքանչյուր տարի այդ գործընթացների իրականացման համար:

Արդյո՞ք ԱԲՀ-ն ունի մարդկային, ֆինանսական աջակցության կարիք հետադարձ կապի գործընթացների բարելավման համար:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՑ ԱԲՅ-ի հարգելի՛ ուսանող,

Խնդրում ենք մասնակցել այս անանուն հարցմանը, որը մեզ կօգնի հասկանալու մեր Համալսարանի, մատուցվող կրթական ծառայությունների ուժեղ և թույլ կողմերը, բացահայտել խնդիրները և գտնել դրանց լուծման ուղիներ:

1. Համալսարանից ակնկալվող հիմնական պահանջները և բավարարվածությունը.

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

	Բովանդակություն	Այո	Ոչ	Մասամբ
1.	Մասնագիտական գրականության տրամադրում			
2.	Համակարգիչների տրամադրում			
3.	Համացանցի տրամադրում			
4.	Ժամանակին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում			
5.	Լսարանային որակյալ պայմանների ապահովում			
6.	Արտերկրի դասախոսների հետ համագործակցության ապահովում			
7.	Արդյունավետ պրակտիկայի ապահովում			
8.	Օտար լեզվի ուսուցման հնարավորության ընձեռում			

2. Ծանոթ եք Ձեր իրավունքներին և պարտականություններին:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

1. Իրավունքներ	Այո		Ոչ	
2. Պարտականություններ	Այո		Ոչ	

3. Բուհում պաշտպանվա՞ծ են Ձեր իրավունքները.

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

1. Այո		2. Մասամբ		3. Ոչ	
---------------	--	------------------	--	--------------	--

4. Համալսարանում Ձեր իրավունքների ոտնահարման դեպքում ու՞մ եք դիմում և որքանո՞վ եք բավարարված.

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով մեկ կամ մի քանի վանդակներում /

		Հաճախ	Հազվադեպ	Երբեք	Բավարարվա՞ծ եք	
					Այո	Ոչ
1.	Ռեկտոր					
2.	Պրոռեկտոր					
3.	Ուս. բաժին					
4.	Դեկան					
5.	Ուսումնական մաս					
6.	Ամբիոնի վարիչ					
7.	Ուսանողական խորհուրդ					
8.	Դասախոսներ					
9.	Կուրսի ավագ					

5. Տեղա՞կ եք, թե ուսանողներն ինչպես կարող են մասնակցել համալսարանի կառավարմանը.

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

1. Այո		2. Մասամբ		3. Ոչ	
---------------	--	------------------	--	--------------	--

6. Ուսանողների կարծիքը հաշվի առնվո՞ւմ է համալսարանում որոշումներ կայացնելիս.

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

1. Այո	2. Մասամբ	3. Ոչ	
--------	-----------	-------	--

7. Ումի՞ց և ինչպե՞ս ուսանողները կարող են տեղեկանալ ուսումնական գործընթացի, գիտելիքների գնահատման համակարգի, դասընթացների, քննական հարցաշարերի և այլնի վերաբերյալ:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով մեկ կամ մի քանի վանդակներում/

Տեղեկատվության աղբյուր	
1.	Դասախոսներ
2.	Ուսումնական մաս
3.	Դեկան
4.	Ամբիոն
5.	Համալսարանում փակցված հայտարարություններ
6.	Համալսարանի պաշտոնական կայք

8. Ուսանողների բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից և ուսումնական գործընթացի կազմակերպումից.

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

		Գեր.	Լավ.	Բավ.	Մերավ.
1.	Ներկայացվող դասընթացների նպատակների և ինդիկսների մատչելիությունը				
2.	Դասընթացների մատուցման ձևը				
3.	Դասընթացների պիտանելիությունը մասնագիտական գործունեության մեջ				
4.	Ուսումնառության ընթացքում տրված տեսական գիտելիքները				
5.	Ուսումնառության ընթացքում ձևավորված գործնական հմտություններ				
6.	Ուսումնառության նպաստումը մասնագիտական կարողությունների ձեռք բերմանը				
7.	Ուսումնառության ապահովվումը մասնագիտական հաղորդակցման և կազմակերպչական հմտությունների ձեռք բերման գործում				
8.	Աշխատաշուկայի պահանջերին համապատասխան մասնագետի պատրաստումը				
9.	Դասախոսների հարգալից վերաբերմունքն ուսանողների նկատմամբ				
10.	Ուսանողների գիտելիքների գնահատման թափանցիկությունը և արդարացիությունը				

9. Համալսարանի և մասնագիտության ընտրությանը նպաստող գործոնները.

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար մեկ վանդակում/

1.	Մասնագիտական նախասիրությունները	
2.	Համալսարանի հեղինակությունը	
3.	Ընտանիքի, ընկերների խորհուրդ	
4.	Համալսարանի շրջանավարտի խորհուրդ	
5.	Այլ պատասխան	

10. Խորհրդատվություն ստանալու նպատակով հիմնականում ու՞մ եք դիմում:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով մեկ կամ մի քանի վանդակներում/

Ռեկտորին	
Դեկանին	
Ուսումնական մասի վարիչին	
ՈԱԲ ղեկավարին	
Դասախոսին	
Կուրսի Խորհրդատուին	
Այլ	

11. ԱԲԶ-ի վարչական ծառայություններից օգտվե՞լ եք և որքանո՞վ եք գոհ:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով մեկ կամ մի քանի վանդակներում/

	Ծառայության տեսակ	Օգտվել եմ		Գոհ եմ	
		Այո	Ոչ	Այո	Ոչ
1.	Տեղեկանքների տրամադրում				
2.	Բնութագրերի տրամադրում				
3.	Քննությունների կազմակերպում (հարցաշարերի տրամադրում, քննությունների օրերի հայտնում)				
4.	Դիմումների ընդունում				
5.	Կազմակերպչական այլ հարցեր				

12. Գնահատե՛ք համալսարանի վարչական ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

	Վարչական ստորաբաժանում	Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար
1.	Ուսումնական մաս				
2.	Ամբիոններ				
3.	Դեկանատ				
4.	Ռեկտորատ				
5.	Գրադարան				
6.	Համակարգչային լսարան				
7.	Հաշվապահություն				

13. Ուսումնական գործընթացում հանդիպե՞լ եք անազնվության դրսևորումների:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

		Այո	Ոչ
1.	Դասախոսների կողմից կողմնակալ վերաբերմունք		
2.	Դրական կամ բարձր գնահատական ստանալու նպատակով դասախոսի համար կատարե՞լ եք պատասխան ծառայություն, դրամական կամ այլ նվիրատվություն		

14. Հստա՞կ է ձեզ համար, թե ինչպես է ձևավորվում ձեր գնահատականը:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

1. Այո		2. Մասամբ		3. Ոչ	
--------	--	-----------	--	-------	--

15. Որքանով եք գոհ դասախոսական կազմի մասնագիտական որակից:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

Հիմնականում որակյալ մասնագետներ են	
Մասամբ որակյալ մասնագետներ են	
Դժվարանում են պատասխանել	

16. Ուսումնաարտադրական պրակտիկաները նպաստում են Ձեր մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

	Այո	Ոչ	Մասամբ
1. Գործնական հմտությունների ձեռք բերում			
2. Ձեռք բերած գիտելիքների կիրառում			
3. Աշխատանքային կապերի ձեռքբերում			
4. Աշխատանքային փորձի ձեռքբերում			

17. Գնահատեք Ձեր բավարարվածությունը Համալսարանի տրամադրած ռեսուրսներից:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

	Գեր.	Լավ	Բավ.	Անբավ.
1. Ուսումնական լսարանների վիճակը և կահավորանքը				
2. Ուսումնական կաբինետների, լաբորատորիաների վիճակը և կահավորանքը				
3. Ինչպե՞ս եք գնահատում գրադարանի, ընթերցասրահի վիճակը և կահավորանքը				
4. Գրադարանում, ընթերցասրահում առկա ժամանակակից մասնագիտական գրականության վիճակը				
5. Գրադարանի և ընթերցասրահի աշխատաժամերը և սպասարկումը				
6. Ինչպե՞ս եք գնահատում համալսարանի համակարգչային սրահից Ձեր օգտվելու հասանելիությունը				
7. Համալսարանի համացանցի հասանելիությունը				
8. Համալսարանի էլեկտրոնային առկա գրականությունը				
9. Ուսումնական գործընթացի կազմակերպումը և սպասարկումն ամբողջությամբ				
10. Համալսարանի ընդհանուր սանիտարահիգիենիկ և սանհանգույցների վիճակը				
11. Համալսարանի ջեռուցման համակարգը				
12. Սննդի կետի կահավորանքը և սպասարկումը				

18. Ինչպե՞ս կարող եք Ձեր դժգոհությունները, առաջարկություններն արտահայտել Համալսարանի տրամադրած ռեսուրսների վերաբերյալ (նշել հնարավոր բոլոր տարբերակները)

1. **Չրուցել դասախոսների հետ**
2. **Տեղեկացնել ամբիոնի վարիչին**
3. **Տեղեկացնել ուսումնական մասի վարիչին**
4. **Տեղեկացնել որակի ապահովման բաժնի ղեկավարին**

19. Ինչպե՞ս են ուսանողները տեղեկանում համալսարանի ձեռքբերումների մասին: /Ընել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով վանդակում/

Գիտական խորհրդի նիստերին մասնակցելով	
Համալսարանի պաշտոնական կայքից	
Ուսանողական խորհրդի նիստերին մասնակցելով	
Բուհում փակցված հայտարարություններից	

20. Ձեզ դասավանդող դասախոսները ուսանողներին տրամադրում են իրենց գիտական նվաճումները (օրինակ, իրենց դասավանդած առարկայի շրջանակում ներկայացնում են իրենց կատարած գիտական նորարարությունները, քննարկում իրենց գիտական հոդվածները, մենագրությունները):

1. Հազվադեպ
2. Հաճախ
3. Միշտ
4. Դժվարանում եմ պատասխանել

21. Արդյո՞ք հարցումը հնարավորություն տվեց արտահայտելու Ձեր կարծիքը Համալսարանի գործունեության վերաբերյալ:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

1. Այո		2. Մասամբ		3. Ոչ	
---------------	--	------------------	--	--------------	--

ԱԲՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ

Ավանդական բժշկության համալսարանի սիրելի՛ շրջանավարտ,

Դուք մասնակցում եք ԱԲՀ-ի կրթության որակի ապահովման և բարելավման արդյունավետության գնահատման հարցմանը: Ձեր անկեղծ և օբյեկտիվ պատասխանները կնպաստեն համալսարանի հետագա գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Գնահատեք Ձեր որակական հատկանիշները Գերազանց , Լավ , Բավարար , Անբավարար սանդղակով՝ նշելով V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար միայն մեկ վանդակում/

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Նշեք Ձեր ֆակուլտետը և մասնագիտությունը

1.2. Սեռը Իգական **Արական** **1.3. Տարիքը**

2. Շրջանավարտի որակական հատկանիշներ

		Գեր.	Լավ	Բավ.	Անբավ.
1.	Համալսարանում ստացած Ձեր տեսական գիտելիքները				
2.	Աշխատաշուկայի պահանջներին Ձեր տեսական գիտելիքների համապատասխանությունը				
3.	Համալսարանում Ձեր ձեռք բերած գործնական հմտությունները				
4.	Աշխատաշուկայի պահանջներին Ձեր ձեռք բերած գործնական հմտությունների համապատասխանությունը				
5.	Համալսարանում Ձեր ձեռք բերած մասնագիտական կարողությունները				
6.	Աշխատաշուկայի պահանջներին Ձեր ձեռք բերած մասնագիտական կարողությունների համապատասխանությունը				
7.	Ձեր գնահատականը համալսարանում ստացած կրթությունից				
8.	Գործատուների գնահատականը Ձեր ստացած կրթությունից				
9.	Ինչպես կգնահատեք համալսարանում ստացած ավանդական բժշկության գիտելիքների դերը Ձեր մասնագիտական գործունեության մեջ:				

3. ԱԲՀ-ն ավարտելուց անմիջապես հետո ինչով եք զբաղվել

	Այո	Ոչ
Շարունակել եք ուսումը		
Անցել եք աշխատանքի		
Համատեղել եք մասնագիտական աշխատանքը և ուսումը		

4. Աշխատանքային գործունեությունը

- Աշխատում եմ իմ մասնագիտությամբ պետական հիմնարկում:
- Աշխատում եմ պետական հիմնարկում, սակայն ոչ իմ մասնագիտությամբ:
- Աշխատում եմ մասնավոր կազմակերպությունում մասնագիտությանս համապատասխան:

- Աշխատում եմ մասնավոր կազմակերպությունում մասնագիտությանս ոչ համապատասխան:
- Չբաղվում եմ սեփական բիզնեսով:
- Նախկինում աշխատել եմ, սակայն հիմա չեմ աշխատում:
- Երբևէ չեմ աշխատել:

5. Աշխատանքի ընդունվելիս հանդիպել ե՞ք խոչընդոտների, եթե այո, ապա նշեք ինչպիսի խոչընդոտներ են եղել:

6. Ինչ եք կարծում ԱԲՀ-ում ստացած կրթությունը ձեզ բավարար պատրաստված է դարձրել աշխատանքային արդյունավետ գործունեություն սկսելու համար:

- Ոչ բավարար
- Որոշ չափով բավարար
- Լիովին
- Չգիտեմ

7. Եթե հնարավորություն ունենայիք, ապա ինչը կփոխեիք Ձեր բուհում

Յ/Յ	Փոփոխության անվանումը	Նշում
	1. Ուսումնական գործընթացները (նշել մինչև 4 տարբերակ)	
1.1.	Կվերանայելի մասնագիտական առարկաների ծրագրերը՝ տալով դրանց ավելի շատ գործնական ուղղվածություն:	
1.2.	Կներդնելի կրթության խրախուսման նոր ձևեր:	
1.3.	Կավելացնելի մասնագիտական առարկաների քանակը:	
1.4.	Կփոխելի գիտելիքների գնահատման համակարգը՝ ավելի շատ կիրառելով (ընդգծել մեկը) <ul style="list-style-type: none"> ✓ թեստային համակարգը ✓ գրավոր միջանկյալ քննությունների և մասնագիտացումների ցանկը ✓ բանավոր քննությունների և ստուգաթղթերի համակարգը ✓ նշված համակարգերի արդյունավետ համադրումը: 	
1.5.	Կբարձրացնելի սովորողներին գիտական աշխատանքում ներգրավելու աստիճանը:	
1.6.	Առավել նպատակային կդարձնելի համագործակցությունը գործատուների հետ:	
1.7.	Առավել կսերտացնելի կապը այլ ուսումնական հաստատությունների հետ:	
1.9.	Այլ(նշել)	
1.10.	Կստեղծելի սովորողների ժամանցի և հանգստի համար ավելի հարմարավետ պայմաններ:	
1.11.	Կզարգացնելի ուսանողների ինքնավարության համակարգը:	
1.12.	Կուժեղացնելի շրջանավարտների աշխատանքի տեղավորման ուղղորդման աշխատանքները:	
1.13.	Կուժեղացնելի համալսարանի գովազդը	
1.14.	Կհարստացնելի համակարգչային բազան:	
1.15.	Կնախատեսելի սովորողների համար լրացուցիչ ծառայություններ:	

8. Եթե հնարավորություն ունենայիք ուսումը նորից սկսելու, Դուք կընտրեի՞ք նույն մասնագիտությունը և նույն կրթական հաստատությունը:

- ❖ Այո, միանշանակ նորից կընտրեի
- ❖ Հնարավոր է, որ ընտրեի
- ❖ Միանշանակ չեի ընտրի

Ն Շ ՈՒ Մ Ն Ե Ր

Շնորհակալություն համագործակցության համար

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՉԼԱՅԱՏՈՒՄ ԱԲՅ-ի հարգելի՛ ուսանող,

Նպատակ ունենալով կատարելագործել կրթական գործընթացները և ապահովել որակյալ կրթություն՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտին անցկացվում է դասընթացների գնահատում:

Կարևորելով Ձեր կարծիքը, խնդրում ենք մասնակցել հարցմանը, ինչը կօգնի բացահայտել դասընթացի ուժեղ և թույլ կողմերը: Հարցումն անանուն է, գաղտնի և տվյալները կօգտագործվեն միայն ընդհանրացված տեսքով:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

Դասընթացի գնահատման հարցաթերթ

Դասընթացի արդյունավետության որակական Հատկանիշներ		Գեր.	Լավ	Բավ.	Անբավ.
1.	Ուսումնառության արդյունքների համապատասխանությունը դասընթացի նպատակներին կարելի է գնահատել				
2.	Դասընթացի յուրացմանը նպաստող գործնական և լաբորատոր աշխատանքները կարելի է գնահատել				
3.	Դասընթացի ուսումնական կաբինետների և լաբորատորիաների հագեցվածությունը ժամանակակից տեխնիկական սարքերով և դիդակտիկ պարագաներով				
4.	Դասընթացի համար առաջարկված գրականության և ուսումնամեթոդական նյութերի օգտակարությունը				
5.	Դասընթացի դասախոսությունների համառոտագրերի և ուսումնական այլ նյութերի (այդ թվում՝ էլեկտրոնային) համապատասխանությունը դասընթացի բովանդակությանը				
6.	Դասընթացի դասավանդման ժամանակ նորագույն տեխնիկական միջոցների կիրառման աստիճանը				
7.	Դասընթացի՝ կիրառական հմտությունների ձևավորմանը նպաստող գործնական պարապմունքները և առաջադրանքները				
8.	Դասընթացի նպաստումը մասնագիտական գիտելիքների և գործնական կարողությունների ձևավորմանը				
9.	Կլինիկական դասընթացի ապահովվածությունը համապատասխան բազայով				
10.	Դասընթացն ամբողջությամբ գնահատում եմ				

Որքանով է ԱԲՀ-ում իրականացվող դասապրոցները համապատասխանում հետևյալ չափանիշներին:

	Չափանիշներ	Լիովին համապատասխանում է	Ավելի շուտ համապատասխանում է	Ավելի շուտ չի համապատասխանում	Ընդհանրապես չի համապատասխանում
1.	Ուսանողները սովորում են տեղեկատվությունը հայթայթել ինքնուրույն և այն վերածել գիտելիքի:				
2.	Ուսանողների կողմից դասընթացը գնահատվում է և դա օգնում է դասախոսին դասավանդման արդյունավետության մասին ճիշտ պատկերացում կազմելու:				
3.	Ուսանողներն ակտիվ մասնակիցներ են, ոչ թե պարզապես լսարան՝ դասախոսությունների համար:				
4.	Ուսանողները սովորում և գնահատվում են ոչ միայն անհատական մասնակցության համար, այլ նաև թիմային աշխատանքների:				
5.	Դասավանդողն ուղղորդում է ուսանողին դեպի քննադատական մտածողություն, օգնում նրան ձևակերպելու ինդրահարույց հարցեր և բացահայտելու դրանց լուծման առավել արդյունավետ ուղիներ:				
6.	Դասախոսն ավելի շատ համակարգում է դասապրոցները և ուղղորդում տեղեկատվության աղբյուրների կիրառմանը, քան հանդիսանում տեղեկատվության միակ հաղորդողը:				
7.	Ուսանող-դասախոս հարաբերությունը բնութագրվում է հավասարը հավասարին և նպաստում ուսանողների զարգացմանը:				
8.	Ուսանողների մասնակցությունը և ներգրավվածությունը դասապրոցեսին անհրաժեշտ է:				

ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

ԱԲՀ-ի հարգելի՛ դասախոս,

Համալսարանում մատուցվող ծառայությունների ուժեղ և թույլ կողմերը բացահայտելու, դրանց լուծումները գտնելու նպատակով, ինդրում ենք մասնակցել այս անանուն հարցմանը և տալ օբյեկտիվ պատասխաններ:

1. Ծանոթ եք համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի իրավունքներին և պարտականություններին:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

	Այո	Ոչ	Մասամբ
Իրավունքներ			
Պարտականություններ			

2. Պաշտպանվա՞ծ են արդյոք համալսարանում դասախոսի իրավունքները:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

1. Այո	2. Մասամբ	3. Ոչ

3. Տեղյա՞կ եք համալսարանի կառավարմանը դասախոսների մասնակցության ձևերին:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

1. Այո	2. Մասամբ	3. Ոչ

4. Նշեք ինդրեմ, թե ինչպե՞ս կարող են դասախոսները մասնակցել Համալսարանի կառավարմանը:

- _____
- _____
- _____

5. Համալսարանում որոշումներ կայացնելիս հաշվի առնվո՞ւմ է դասախոսների կարծիքը:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

1. Այո	2. Մասամբ	3. Ոչ

6. Ինչպե՞ս եք մշակել Ձեր դասավանդած դասընթացների առարկայական ծրագիրը

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

Առարկայական ծրագրի մշակումը			
Ինքնուրույն	Թիմային	Օգտվել են պատրաստի ծրագրից	Ուսումնասիրել են միջ-ազգային փորձը

7. Ի՞նչ հաճախականությամբ եք վերանայում առարկայական ծրագրերը:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

Վերանայման հաճախականությունը			
Անհրաժեշտության դեպքում	Տարին 1 անգամ	2 տարին 1 անգամ	3 տարին 1 անգամ

8. Առարկայական ծրագրերը վերանայելիս ինչն էք հաշվի առնում փոփոխություններ իրականացնելու համար (նշեք մինչև 3 տարբերակ)

1. Նախկին կուրսի հաջողությունները և ձախողումները տվյալ առարկայի յուրացման հետ կապված
2. Համալսարանի ռազմավարության փոփոխությունները
3. ՀՀ կրթական համակարգի փոփոխությունները, բարեփոխումների պահանջները
4. Աշխատաշուկայի պահանջները

9. Հստակ են արդյոք համալսարանի կողմից դասախոսներին առաջադրվող պահանջները:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

1. Այո		2. Մասամբ		3. Ոչ	
--------	--	-----------	--	-------	--

10. Համալսարանում ինչպե՞ս են գնահատվում դասախոսի մասնագիտական որակները:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով մեկ կամ մի քանի վանդակներում/

1. Վարկանիշային հարցաթերթիկ
2. Դասախոսներ
3. Դասախոսների որակական հատկանիշների գնահատումը ուսանողների կողմից

11. Ինչպե՞ս էք տեղեկանում ուսումնական գործընթացին վերաբերող տարբեր հարցերի մասին:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

	Տեղեկատվության աղբյուր	
1.	Դեկան	
2.	Ուսումնական մաս	
3.	Ամբիոն	
4.	Հայտարարություններ	
5.	Համալսարանի կայք	

12. Մասնակցել էք մասնագիտական վերապատրաստումներին:

1. Վերջին 5 տարին	Այո		Ոչ	
2. Վերջին 3 տարին	Այո		Ոչ	

13. Վերապատրաստումը նպաստո՞ւմ է Ձեր մասնագիտական աճին:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

1. Այո		2. Մասամբ		3. Ոչ	
--------	--	-----------	--	-------	--

14. Համալսարանը մասնագիտական աճի հնարավորություն տալի՞ս է:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

1. Այո		2. Մասամբ		3. Ոչ	
--------	--	-----------	--	-------	--

15. Վերջին հինգ տարիների ընթացքում Ձեր գիտական գործունեությունը:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

Գիտական աշխատանք		
1.	Մասնակցություն գիտաժողովի	
2.	Մենագրություն	
3.	Հոդված	
4.	Այլ	

16. Համալսարանն աջակցում է գիտական աշխատանքների, ձեռնարկների հրատարակմանը

1. Այո	2. Մասամբ	3. Ոչ
--------	-----------	-------

17. Տեղա՛կ եք համալսարանի դասախոսների գիտական գործունեությանը:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

1. Այո	2. Մասամբ	3. Ոչ
--------	-----------	-------

18. Ո՞ւմ և ո՞ր եք դիմում ուսումնական գործընթացի հետ կապված հարցերով:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով մեկ կամ մի քանի վանդակներում/

1. Ուսումնական մաս 2. Ամբիոն (վարիչ, լաբորանտներ) 3. Դեկան
 4. Դասախոսներ 5. Ռեկտոր 6. Որակի ապահովման բաժին

19. Համալսարանի ուսանողները տեղա՛կ են Ձեր գիտական գործունեության և ձեռքբերումների մասին:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

1. Այո	2. Մասամբ	3. Ոչ
--------	-----------	-------

20. Համալսարանում կա՞ն բավարար պայմաններ լիարժեք աշխատանքային գործունեության համար:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ կամ մի քանի վանդակներում/

	Բովանդակություն	Այո	Ոչ	Մասամբ
1.	Շենքային պայմաններ			
2.	Նյութատեխնիկական միջոցներով կահավորված լսարաններ			
3.	ԳԲՈԿ			
4.	Լաբորատոր դասընթացներն արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ սարքավորումներով ապահովված լաբորատորիա			
5.	Համակարգիչներ, ցուցարկիչներ			
6.	Համացանց			
7.	Մասնագիտական գրականություն			
8.	Կոնֆերանս դահլիճ			
9.	Բժշկական ծառայության մատուցում ԳԲՈԿ-ում			
10.	Սննդի կետ			
11.	Ջեռուցում			
12.	Լուսավորություն			
13.	Մարզադահլիճներ			

21. Գո՞հ եք համալսարանի վարչական ստորաբաժանումների աշխատանքներից:

		Այո	Ոչ	Մասամբ
1.	Ամբիոններ			
2.	Դեկանատ			
3.	Ուսումնական մաս			
4.	Գիտական խորհուրդ			
5.	Ռեկտորատ			
6.	Ընդհանուր բաժին			
7.	Գրադարան			
8.	Հաշվապահություն			

22. Համալսարանն ընձեռում է արտերկրի դասախոսների, բժիշկ-մասնագետների հետ փորձի փոխանակման հնարավորություն

1. Այո		2. Մասամբ		3. Ոչ	
--------	--	-----------	--	-------	--

23. Ու՞մ եք դիմում համալսարանի տրամադրած ռեսուրսներից դժգոհությունների կամ առաջարկությունների դեպքում:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ կամ մի քանի վանդակներում/

1. Ռեկտոր	
2. Դեկան	
3. Ամբիոնի վարիչ	
4. Որակի ապահովման բաժին	
5. Ուսումնական մաս	
6. Գործընկերներ	

24. Ինչպե՞ս եք տեղեկանում համալսարանի ընթացիկ գործունեության մասին:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով մեկ կամ մի քանի վանդակներում/

1. Համալսարանի կայք	
2. Ամբիոնի նիստեր	
3. Գիտական խորհրդի նիստեր	
4. Համալսարանի հայտարարություններ	
5. Սոց. ցանցեր	
6. Այլ	

25. Ուսումնական գործընթացում հանդիպե՞լ եք անազնվության դրսևորումների:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

	Անազնվության դրսևորում	Այո	Ոչ
1.	Դասախոսների կողմից կողմնակալ վերաբերմունք		
2.	Գնահատականի համար ծանոթի միջնորդում		
3.	Գնահատականի համար գումարի տրամադրում		

26. Նման հարցումները նպաստո՞ւմ են համալսարանի որակի բարելավմանը:
/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

1. Այո		2. Մասամբ		3. Ոչ	
--------	--	-----------	--	-------	--

27. Համալսարանի ղեկավարությունը ապահովում է Ձեզ համապատասխան աշխատավարձով:

1. Այո		2. Մասամբ		3. Ոչ	
--------	--	-----------	--	-------	--

28. Նշեք Ձեր առաջարկությունները և հարցերը, որոնք կցանկանայիք ընդգրկել հաջորդ հարցմանը:

Սոցիալ ժողովրդագրական հարցեր

Նշեք Ձեր սեռը _____, նշեք Ձեր տարիքը _____,
Նշեք ձեր մասնագիտությունը _____
Նշեք գիտական աստիճանը և կոչումը _____

Նշեք Ձեր աշխատանքային փորձը _____ տարի,
Քանի՞ տարի եք դասավանդում համալսարանում _____
Բացի դասավանդումը այլ աշխատանքային գործունեությամբ զբաղվո՞ւմ եք:
1. Եթե այո, ապա նշեք որտեղ _____
2. Ոչ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ուսանողի ԿՈՂՄԻՑ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Հարգելի ուսանող, ԱԲՀ-ը կարևորելով ուսումնական գործընթացի անաչառ և արդյունավետ կազմակերպումը: Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական և անձնային հատկանիշները գնահատելու և բարելավելու նպատակով խնդրում ենք ներքոհիշյալ հարցերին պատասխանելք ամբողջությամբ և անկաշկանդ: Յուրաքանչյուր հարց գնահատվում է 1-5 միավորով, Ձեր գնահատականը դրեք V պայմանական նշանով:

1. Ընտրեք առարկան դասավանդող դասախոսին

○ Ամբիոն _____ դասախոս _____

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		1	2	3	4	5
1.	Դասավանդողը դասը սկսում և ավարտում է ժամանակին					
2.	Դասավանդողն ուսանողներին ներկայացնում է առարկայի նկարագիրը ամբողջությամբ, հստակ բացատրում է նպատակը, ակնկալվող արդյունքները:					
3.	Դասավանդման ընթացքում կիրառում է ժամանակակից տեխնիկական միջոցներ:					
4.	Դասավանդողը հարգալից վերաբերմունք է ցուցաբերում ուսանողի նկատմամբ:					
5.	Դասավանդողն ուսանողին գնահատում է արդար ու թափանցիկ:					
6.	Նյութը մատուցում է պարզ, հասկանալի և մատչելի:					
7.	Անհատական աշխատում է ուսանողների հետ:					
8.	Օժանդակում է ուսանողին մասնագիտական գրականությունից օգտվելու և նյութեր տրամադրելու հարցում:					
9.	Դասի ընթացքում պահում է լսարանի կարգապահությունը:					
10.	Կարողանում է հետաքրքրություն առաջացնել իր առարկայի նկատմամբ:					
11.	Գործնական պարապմունքները և առաջադրանքները նպաստում են կիրառական հմտությունների ձևավորմանը:					
12.	Խրախուսում է ուսանողների ինքնուրույն խմբային աշխատանքը:					
13.	Դասավանդողը անհրաժեշտ գիտելիքներ ունի առարկայից դուրս՝ պատասխանելու ուսանողների հարցերին:					
14.	Հետաքրքիր անձնավորություն է, նրանից կարելի է շատ բան սովորել:					

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

**ԲՈՒՅԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ ՆՊԱՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ
ՀԱՐՑԱԹԵՐԹ**

Հարգելի ուսանող.

ԱԲՀ-ն իրականացնում է հետազոտություն համալսարանում մասնագիտությունների ընտրությանը նպաստող գործոնների ուղղությամբ:

Ձեր անկեղծ և օբյեկտիվ գնահատականները կնպաստեն ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացմանը: Այս հետազոտությունն անանուն է, և ստացված տվյալները կօգտագործվեն միայն ընդհանրացված ձևով:

Խնդրում ենք կրթական ծրագրերի վերաբերյալ հանրությանը տրամադրվող տեղեկատվության արժանահավատությունից Ձեր բավարարվածությունը գնահատել «Այո», «Մասամբ», «Ոչ» սանդղակով՝ նշելով V յուրաքանչյուր հատկանիշի համար միայն մեկ վանդակում:

Կրթական ծրագիր _____

Կուրս _____

Ֆակուլտետ _____

Ամսաթիվ _____

1. Բուհի մասնագիտության ընտրությանը նպաստող գործոններ /նշելով V միայն մեկ վանդակում:
Ի՞նչ գործոններ են նպաստել բուհի և մասնագիտության ընտրությանը

մասնագիտական նախասիրությունները	
բուհի հեղինակությունը	
ընտանիքի, ընկերների խորհուրդը	
բուհի շրջանավարտի խորհուրդը	
այլ պատասխան	

2.Տրամադրվող տեղեկատվության արժանահավատությունը	Այո	Մասամբ	Ոչ
1. Իրականությանը համապատասխանում է, արդյոք, համալսարանի կողմից հանրությանը տրամադրվող տեղեկատվությունը			
1.1.Մասնագիտության կարևորության մասին			
1.2. Աշխատաշուկայում մասնագիտության բարձր պահանջարկվածության մասին			
1.3.Գործնական մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերման հնարավորության մասին			
1.4.Ուսումնառության ռեսուրսների ուսանողական օժանդակ ծառայությունների մասին			
2. Ընդհանուր առմամբ գոհ եք ԱԲՀ-ում Ձեր ստացած կրթությունից			
3. Խորհուրդ կտաք, արդյոք , Ձեր մերձավորներին և ընկերներին ընդունվել ԱԲՀ			

3.Ուսանողների բավարարվածությունը ԱԲՀ-ի վարչակազմի, դասախոսների, աշխատակիցների և ուսանողների հետ փոխհարաբերություններից		Այո	Մասամբ	Ոչ
1.	Գո՞հ եք, արդյոք, Ձեր և			
	1.1.Ֆակուլտետի ղեկավարության փոխհարաբերություններից			
	1.2.Ֆակուլտետի դասախոսների փոխհարաբերություններից			
	1.3.Ֆակուլտետի օժանդակ կազմի փոխհարաբերություններից			
2.	Խորհրդատվություն ստանալու նպատակով հիմնականում ում եք դիմում			
	2.1.Ռեկտորին			
	2.2.Դեկանին			
	2.3.Ուսումնական մասի վարիչին			
	2.4.Որակի ապահովման բաժնի ղեկավարին			
	2.5.Դասախոսին			
	2.6.Կուրսի խորհրդատուին			
3.	Դրական կամ բարձր գնահատական ստանալու նպատակով դասախոսի համար գոնե մեկ անգամ կատարել եք պատասխան ծառայություն, դրամական կամ այլ նվիրատվություն			
4.	Արդյո՞ք հստակ և թափանցիկ են ուսանողների դիմումների և բողոքների արտահայտման ընթացակարգերը և մեխանիզմները			

4.Խնդրում եմք նշել Ձեր լրացուցիչ առաջարկությունները և ցանկությունները՝

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ